2011 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

2011 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 399.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 405.8 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 99.3%-ով և 88.5%-ով ապահովել են ՀՀ կառավարության առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշների կատարումը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 47.3%-ով, ծախսերի գծով՝ 43.1%-ով:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 9%-ով կամ 32.9 մլրդ դրամով, որն ապահովվել է հարկերի ու տուրքերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների և պաշտոնական դրամաշնորհների հաշվին, որոնք համապատասխանաբար 10%-ով (28.7 մլրդ դրամով), 11.3%-ով (6.2 մլրդ դրամով) և 65.3%-ով (1.1 մլրդ դրամով) գերազանցել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները: Հաշվետու ժամանակահատվածում այլ եկամուտները նվազել են 12.7%-ով կամ 3 մլրդ դրամով:

Պետական բյուջեի եկամուտների 94.1%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 5.2%-ը՝ այլ եկամուտների, 0.7%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 8.7 մլրդ դրամ կամ ծրագրված մուտքերի 87.9%-ը:

2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 314.8 մլրդ դրամ հարկային եկամուտներ ու պետական տուրքեր, որոնք կազմել են կիսամյակային ծրագրի 99.9%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 10%-ով կամ 28.7 մլրդ դրամով: Հարկային եկամուտների աճը

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի, այլ հարկերի և եկամտահարկի աճով:

Հարկերի և տուրքերի 48%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է ավելի քան 151 մլրդ դրամ և 5.9%-ով կամ 8.5 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 95.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 55.7 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից, ընդ որում, եկամուտների աճն առավելապես ապահովվել է ներքին շրջանառությունից ստացված մուտքերի հաշվին:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 5.6%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 17.8 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 12.4 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 5.4 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 18%-ը ձևավորվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 56.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 30.2%-ով կամ 13.1 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 37.4 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 11.9%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 8.6%-ով կամ շուրջ 3 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են ավելի քան 17.6 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 5.6%-ը և 15.7%-ով կամ 2.4 մլրդ դրամով գերազանցել 2010 թվականի համապատասխան ցուցանիշը:

2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 9.7 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով կիսամյակային ծրագրի 98.6%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 12.7%-ով կամ 1.1 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են շուրջ 10.1 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.2%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ նվազել է 7.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր դաշտ անցնելու հանգամանքով:

2011 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 5.8 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 46.7%-ով կամ 1.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման և այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 8.8 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ 3.4 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 1.6 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 1.4 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 693.4 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 600 մլն դրամ՝ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղու ներմուծման թույլտվության համար սակագնային քվոտայի վճարը, 239.1 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 207.5 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 21.9 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 733.7 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 56.5%-ով կամ 3.2 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 60.9 մլրդ դրամ՝ 101.4%-ով ապահովելով կիսամյակային կանխատեսված ծրագիրը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 11.3%-ով կամ շուրջ 6.2 մլրդ դրամով:

2011 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում մուտքագրվել է շուրջ 2.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 34.6%-ը: Հաշվետու ժամանակահատվածում չի ստացվել ընդհանուր բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 7 մլրդ դրամ Եվրամիության դրամաշնորհը:

Նշված 2.8 մլրդ դրամից շուրջ 2.5 մլրդ դրամը կազմել է Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար ստացված դրամաշնորհը: 279.1 մլն դրամ է մուտքագրվել պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ կազմելով ծրագրով նախատեսվածի 28.6%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ստացված դրամաշնորհների աճը կազմել է 65.3% կամ 1.1 մլրդ դրամ:

2011 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 20.8 մլրդ դրամ՝ 9.2%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից շուրջ 7.7 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնց ծրագիրը կատարվել է 98.1%-ով: Այլ եկամուտների ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, նախորդ տարի պետական բյուջեից հատկացված և չօգտագործված միջոցների վերադարձի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի և ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների ծրագրային ցուցանիշների գերազանցմամբ: Ի տարբերություն նշված եկամտատեսակների, որոշ եկամուտների գծով արձանագրվել են համեմատաբար ցածր ցուցանիշներ: Մասնավորապես՝ իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների ծրագիրը կատարվել է 75.9%-ով, տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից մուտքերի ծրագիրը՝ 29.1%-ով: Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 2.9 մլրդ դրամ է մուտքագրվել իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից՝ կազմելով առաջին կիսամյակի ծրագրով կանխատեսված ցուցանիշի 95.1%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 12.7%-ով կամ 3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների նվազմամբ:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը

2011 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 405.8 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 88.5%-ը: Մասնավորապես՝ 371.2 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 34.6 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու ժամանակահատվածում 6.6 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին՝ կազմելով ծրագրվածի 48.7%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 5.9%-ով կամ 22.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների, պայմանագրային ծառայությունների ձեռքբերման, պետական պարտքի սպասարկման և այլ ծախսերի աճով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 371.2 մլրդ դրամ՝ 90.5%-ով կատարելով կիսամյակային ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 6.4%-ով կամ 22.4 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 34.4 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 2.4 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են կիսամյակային ծրագրի համապատասխանաբար 94.1%-ը և 87.8%-ը: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 5.8%-ով և 4.8%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 73.4 մլրդ դրամ, որը կազմել է կիսամյակային ծրագրի 89.7%-ը և 7.2%-ով գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 17.6 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով ծրագրի 85.6%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 10.4 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 7.2 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 20%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը տեղի է ունեցել հիմնականում ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճի հաշվին: Պետք է ընդգծել, որ գնաճի դեմ պայքարի շրջանակներում ֆինանսական շուկայում դիտարկվող տոկոսադրույքների ընդհանուր աճի միտումը գրեթե չի անդրադառնում պետական պարտատոմսերի եկամտաբերության վրա, քանի որ միջին և երկարաժամկետ առումներով դրամական շուկայի մասնակիցների կողմից շարունակում են դիտարկվել որպես ներդրման ամենակայուն և հուսալի միջոց:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 8.9 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով ծրագրի 95.4%-ը և 6.5%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

44.5 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 43.6 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 750.3 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին և 179 մլն դրամը՝ օտարերկրյա պետություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 16.2 մլրդ դրամի դոտացիաներ, որոնք պահպանվել են նախորդ տարվա մակարդակին: Դրամաշնորհների կիսամյակային ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 92.1%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5%-ով:

2011 թվականի հունվար-հունիս ամիսների պետական բյուջեի ծախսերի 31.3%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 127.1 մլրդ դրամ՝ 93.4%-ով ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը և 5.4%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Մասնավորապես՝ նշված գումարից 94.4 մլրդ դրամ (96.2%) են կազմել կենսաթոշակները, 32.7 մլրդ դրամ (86.2%)՝ նպաստները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 62.8 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ կազմելով ծրագրի 84.1%-ը և 5.7%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հունվար-հունիս ժամանակահատվածում կազմել են 34.6 մլրդ դրամ կամ ծրագրի 71.8%-ը: Մասնավորապես՝ 34.8 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնք կատարվել են 72.1%-ով: 179.6 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կիսամյակային ծրագրով նախատեսված 13.7 մլն դրամի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 564 մլն դրամի դիմաց: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն էական փոփոխություն չի կրել:

<u>ՀՀ պետական բյուջեի պակասուրդը</u>

2011 թվականի հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է շուրջ 6.6 մլրդ դրամ պակասուրդով՝ նախատեսված 56.3 մլրդ դրամի դիմաց: Շեղումը

հիմնականում պայմանավորված է նրանով, որ բյուջեի ազատ միջոցներից կիսամյակային ծրագրով նախատեսված 56.9 մլրդ դրամից օգտագործվել է ընդամենը 18.0 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրներից նախատեսված 22.9 մլրդ դրամի վարկային միջոցներից ստացվել է շուրջ 9.0 մլրդ դրամը: Այն տրամադրվել է Համաշխարհային բանկի կողմից զարգացման քաղաքականության իրականացման երկրորդ ծրագրի շրջանակներում: Անցած ժամանակահատվածում ներքին աղբյուրների գծով պակասուրդի ֆինանսավորման ցուցանիշը կազմել է 21.7 մլրդ դրամ, իսկ արտաքին ֆինանսավորման գծով՝ -15.2 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 2.8 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցները, շուրջ 19.0 մլրդ դրամ՝ ֆինանսական ակտիվները: Մասնավորապես՝ 3.5 մլրդ դրամ է ստացվել գանձապետական պարտատոմսերից: Մուրհակների մարման նպատակով կիսամյակային ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 100.0%-ով՝ կազմելով 21.9 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 2.6 մլրդ դրամի վարկեր (առաջին կիսամյակում ծրագրվածի 94.1%-ը), որից 1 մլրդ դրամը՝ տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի 1-ին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով, 936.7 մլն դրամը՝ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց, 621.8 մլն դրամը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը: Տեղական կենսապարարտանյութերի արտադրությունը խթանելու նպատակով անցած ժամանակահատվածում 50 մլն դրամ է տրամադրվել «ՍԻՍ-95» ՍՊԸ-ին: 3.6 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ 2.6 անգամ գերազանցելով առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշը: 716 մլն դրամ ուղղվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը, որը կատարվել է առաջին կիսամյակում ծրագրված չափով:

Հաշվետու ժամանակահատվածում 30.1 մլն դրամ է տրամադրվել բաժնետոմսերում և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման նպատակով, որը կատարվել է նախատեսված ծավալով:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -15.2 մլրդ դրամ, որից 4.4 մլրդ դրամը՝ փոխառու միջոցների, -19.6 մլրդ դրամը՝ ֆինանսական ակտիվների գծով: Մասնավորապես՝ 4.6 մլրդ դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից շուրջ 3.0 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը: 572.2 մլն դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 412 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 140.5 մլն դրամ՝ ԳԶՄՀ, 115.8 մլն դրամ՝ ՎԶԵԲ, 59.7 մլն դրամը՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 22.1 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը, 250.3 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

2011 թվականի առաջին կիսամյակում շուրջ 19.1 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 120.9 մլն դրամի վճարում՝ առաջին կիսամյակում ծրագրված 124.9 մլն դրամի դիմաց: Ստացված գումարից 49.1 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվար ամսին: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 589.1 մլն դրամ՝ կազմելով կիսամյակային ծրագրի 99.8%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 45.6 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: